ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 ապրիլի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

52
(2902)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՄԵՐԺՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆ ԱՅՍ ՏԱՐԻ ՆՈՒՅՆՊԵՍ ԱՌԱՋԱԴՐՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամի թափուր տեղի համար իր թեկնածությունն է առաջադրել առայժմ մեկ թեկնածու՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Դանիելյանը, որին անցած տարի ՔՊ-ն մերժեց:

Դատավոր Արմեն Դանիելյանը հանրության մեջ աչքի ընկավ ՀՀ 2-րդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին կալանավորելով: Եվ առհասարակ, Արմեն Դանիելյանը սովորություն ունի անկատար չթողնել որեւէ ՔՊ-ական ցանկություն:

Առանց անձի մասին լսած լինելու, նրա իրավունքն ապահովելու, մարդուն կալանավորելու պրակտիկան Արմեն Դանիելյանը շարունակեց կիրառել: «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանը նրան ԱԺ ամբիոնից հիշեցրեց, թե ինչպես առանց իրեն լսելու կալանք իրականացրին: Արթուր Սարգսյանի վերաբերյալ կայացրած կալանքի որոշումն Արմեն Դանիելյանի համար դարձավ կարգապահական վարույթ հարուցելու թեմա, ԲԴԽ-ն, սակայն, 2022թ. մայիսի 12-ին, իհարկե, մերժեց վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արմեն Դանիելյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունը:

Սա էլ դեռ քիչ չէ, 2023 թվականին «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ մայիսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում տեղի ունեցած քննարկմանը հաջորդած դատավորի ընտրությունը շառաչուն ապտակ էր քծնանքի ճամփան բռնած ուժային կառույցների եւ դատական իշխանության բոլոր ներկայացուցիչների համար:

Դատավոր Արմեն Դանիելյանը, որ արդարադատությունը մերժելով, Նիկոլ Փաշինյանի իշխանության աչքին բարձրանալու համար վճիռներ էր կայացնում, ինքը մերժվեց ՔՊ-ի կողմից: Եվ դժվար է ասել, թե Նիկոլ Փաշինյանի նկարով ոգեշնչվող Կարեն Անդրեասյանն ինչպես կընդունի նրա՝ ԲԴԽ գնալու հանդգնությունը:

Օրինապահից դեպի «բարձր ռիսկային խումբ» մեկ քայլ է: ՔՊ-ի հետհեղափոխական Հայաստանում շատերը տնտեսական հրաշքի սպասում են, բայց բացասական իմաստով: Պետության տնտեսական վիճակի կարեւոր բնութագրիչներից է ունիվերսալ վարկային կազմակերպությունների գործունեությունը, որոնցից «Նորման կրեդիտ»-ը գրանցել է ուշագրավ հետագիծ: Այսպես, եթե 2018 թվականի հունիսին ստեղծված ՈՒՎԿ-ն 2020 թվականին ՊԵԿ-ից ստանում էր օրինապահ հարկատուի հավաստագիր (լուսանկարը տես arշlur.aշ կայքում), ապա նույն ՊԵԿ-ի փաստաթղթերի տվյալներով՝ 2023 թվականին «Նորման կրեդիտ»-ը արդեն ստուգման ենթակա բարձր ռիսկային խմբի հիմնարկի է վերածվել: Կա ապագա, թե չկա, տվյալ դեպքում ցույց կտա հարկային ստուգումը. բայց տենդենցները հուսադրող չեն:

Freedom house-ը զեկույց է հրապարակել, որում կետ առ կետ նշված է, թե ինչպես է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Երեւանի ՏԻՄ, եւ համայանքային ՏԻՄ ընտրություններին ձեւացրել, թե պահպանում է թափանցիկությունը, մինչդեռ արձանագրել են վարչական ռեսուրսի ամենամեծ չարաշահումը նախընտրական քարոզարշավներում: «Ընտրական առումով Հայաստանում 2023 թվականին ամենաուշագրավը Երեւանի ավագանու ընտրություններն էին: Երեւանը, քանի որ, Հայաստանի բնակչության ավելի քան մեկ երրորդն է, քաղաքային խորհրդի ընտրությունների արդյունքները ակնկալվում էին որպես կարեւոր միջանկյալ ցուցանիշ իշխող կուսակցության համար՝2026 թվականին կայանալիք հաջորդ համապետական օրենսդրական ընտրություններից առաջ: Ընտրությունների ընդհանուր կազմակերպումն իրականացվել է պրոֆեսիոնալ եւ կանոնավոր կերպով, ինչպես հաղորդում են միջազգային դիտորդները: Այն հիմնականում իրականացվել է ազատ եւ թափանցիկ եղանակով, մինչդեռ մրցույթի մասնակիցները լայնորեն ընդունել են արդյունքները: Այնուամենայնիվ, ընտրությունները նաեւ տեսել են վարչական ռեսուրսի ամենամեծ չարաշահումը հօգուտ իշխող կուսակցության 2018 թվականի թավշյա հեղափոխությունից ի վեր, ինչպես նաեւ հանրային հետաքրքրության բացակայությունը եւ դրա արդյունքում ցածր մասնակցությունը ընտրություններին, լրատվամիջոցների մանիպուլյացիաները եւ բեւեռացումը, որոնք բոլորն էլ մտահոգություն են առաջացնում: Քարոզարշավի ընթացքում տեղական դիտորդները եւ անկախ լրատվամիջոցները նկատեցին վարչական ռեսուրսների համատարած չարաշահում իշխող կուսակցության օգտին: Օրինակ՝ թաղապետերի եւ նրանց տեղակալների ներգրավվածությունը քարոզարշավին՝ կասկածելի իրավական հիմքերով, քարոզարշավի ընթացքում հանրային ֆինանսավորմամբ քաղաքային բարեկարգման զգալի ծրագրեր, որոնք դիտվում էին որպես ընտրողների վրա ազդելու փորձեր. քաղաքային եւ ազգային, վարչական եւ կրթական հաստատությունների անձնակազմի կազմակերպված մասնակցություն «Քաղաքացիական պայմանագրի» կողմից կազմակերպված հանրահավաքներին, եւ համայնքային ծախսերի աննախադեպ աճ՝ իշխող կուսակցության թեկնածուների մասնակցությամբ տարբեր զանգվածային տոնական միջոցառումների համար: «Քաղաքացիական պայմանագրի» կողմից ադմինիստրատիվ ռեսուրսների չարաշահումը քարոզարշավի ընթացքում, եւ իշխող կուսակցության թեկնածուների քաղաքական դերերն ու քաղաքային վարչական պարտականությունները խառնելը տեղական եւ միջազգային դիտորդների կողմից մեկնաբանվել է որպես պետության եւ կուսակցության միջեւ սահմանը լղոզող:»

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Freedom House

Չնայած անցնող ողջ շաբաթն ԱԺ-ում թեժ էր, եւ պատգամավորները ծայրը ծայրին հասցրին սպառել օրակարգը, բայց հաջորդ շաբաթ ԱԺ-ն եւս մեկ արտահերթ նիստ կանի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության նախաձեռնությամբ երեքշաբթի՝ ապրիլի 16-ին, խորհրդարանն արտահերթ նիստ կհրավիրի: Արտահերթ նիստի օրակարգում լինելու է միայն մեկ հարց. ՔՊ-ական Ռուստամ Բաքոյանն առաջարկում է հայկական օրացույցում եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր ավելացնել: Բաքոյանի հեղինակած նախագծով, մասնավորապես, առաջարկվում է փոփոխություններ անել «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքում, եւ օգոստոսի 3-ը օրացույցում նշել 2014 թվականի Սինջարի եզդիների ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Ահա այս նախագիծը քննարկելու համար ՔՊ-ն հաջորդ շաբաթ ԱԺ արտահերթ նիստ է նախաձեռնել:

ԶՐՈՒՅՑ

«ՉՊԵՏՔ Է ՏՐՎԵՆՔ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԻՆ»

Քաղաքագետ Թեւան Պողոսյանն ArmLur.am-ի հետ զրույցում անդրադարձել է Նիկոլ Փաշինյանի՝ երեկ Ազգային ժողովում արված հայտարարություններին, թե պատմական Հայաստանը և իրական Հայաստանը համատեղելի չեն, պետք է հստակ տարբերակել իրական Հայաստանը՝ իր սահմաններով:

-Պարոն Պողոսյան, երեկ Ազգային ժողովում Նիկոլ Փաշինյանը հստակ սահմանագծեր գծեց՝ պատմական Հայաստան, իրական Հայաստան. ասում էր, որ սահմանները տարբեր են, պետք է կարողանանք ընդունել՝ որոնք են իրական Հայաստանի սահմանները, եւ որ ինքը՝ որպես ՀՀ վարչապետ, ընդունում է իրական Հայաստանը՝ իր սահմաններով: Ի՞նչ նկատի ուներ նա:

-Հայաստան ասելով՝ ընկալում ենք հենց Հայաստան. բայց եթե չեմ սխալվում, բացի դրանից մի բան եւս նա երեկ ասաց իր ելույթում, թե Խոր Վիրապի տարածքում, սահմանին թշնամի Թուրքիան է, եթե այդպես է ձեւակերպում, իրական Հայաստան է ասում՝ նկատի ունենալով այսօրվա հանրապետության տարածքը միայն, ապա Խոր Վիրապի մասին նշած իր խոսքում ստացվում է՝ դա ժամանակակից Թուրքիայի տարածքն է, ոչ թե պատմական Թուրքիայի: Միայն այս դեպքում կարող ենք հասկանալ, որ ժամանակակից սահմանը թերեւս գտնվում է Խոր Վիրապից մի քանի կմ հեռավորության վրա, բայց դա Թուրքիայի սահմանը չէ, այլ Հայաստանի: Եկեք հասկանանք, որ իրական նպատակը իր խոսքերի մանիպուլյացիա անելու փորձն է, մեղքերը ուրիշի վրա գցելու՝ սեփական եսը փրկելու համար. նաեւ այդ կերպ իշխանությունը պահելու: Մյուս կողմից ցանկանում է ինչ-որ բաներ անել, որով կհասնի անձնական անվտանգության ապահովմանը: Իրենք այս արհեստական օրակարգային թեմաները մտցնում են, որպեսզի իրականում չունենանք ազգային որեւէ օրակարգի քննարկում. պարզապես դա է: Վաղը, որ տեսնեն իրավիճակը փոխվել է, եւ պետք է ուրիշ բան խոսել, կասեն՝ չէի՞նք ասում, որ մենք էլ ենք պատմական Հայաստանի ջատագով:

-Պարոն Պողոսյան, խնդիրն այն է, որ իրենք այդ մանիպուլատիվ թեզերով հաջողում են օրակարգից շեղել, եւ կարծես հանրության մի մասն էլ նրանց թեզերով առաջնորդվում է:

-Ես կցանկանայի, որ մեզ համար առաջնային լինեին հարցերը, թե ինչ է պետք անել, որ նոր սերունդը ունենա ապագայի հանդեպ նախանձախնդիր հայացք, մտածի՝ ինչ է պետք անել, որ վերադարձնի իր պապերի Հայաստանը, Արցախի Հանրապետության վերականգնման մասին մտածի: Ես ուզում եմ՝ որպես հանրության մի մասնիկ սերունդների հետ աշխատենք: Իսկ այս իշխանությունները տեսնում են, որ իրենց մանիպուլյացիան աշխատում է, այդպես էլ շարունակում են: Իրենք լավագույն օրինակն են՝ ինչ չի կարելի անել, եւ մենք պետք է հենց այստեղից էլ սկսենք:

-Ձեր պատկերացմամբ՝ Ձեր նշած վաղվա օրվա տեսլականը ինչպես եէ կայանալու, ինչպե՞ս կարող ենք վերադարձնել մեր կորուստները:

-Աշխարհում անհնարին ոչինչ չկա, նույնիսկ եթե կա 1 տոկոս հնարավորություն, պետք է գնալ դրա հետեւից: Ռազմական գործողություններին պետք է պատրաստվենք եւ զարկ տանք ազային միասնությանը, աշխատենք գալիք սերունդների հետ, եւ այնպես, որ այդ սերունդները վերադարձնեն մեր ու իրենց հայրենիքը, եւ պահեն այնպես, որ այն այլեւս երբեք կորստյան չմատնվի:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն ապրիլի 12-ին ընդունել է ՀՀ-ում Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսին:

Ինչպես տեղեկացնում են ՀՀ Ազգային ժողովից, խորհրդարանի ղեկավարը, ողջունելով դեսպանին, շնորհակալություն է հայտնել Հայաստանի եւ Եվրոպական միության միջեւ հարաբերությունների ամրապնդմանն ուղղված ջանքերի համար:

«Հայաստանը եւ Եվրոպական միությունը հանձնառու են ընդլայնել եւ խորացնել համագործակցությունը բոլոր հնարավոր ոլորտներում: Մենք պատրաստ ենք եւ տանում ենք աշխատանքներ ինստիտուցիոնալ բարեփոխումների խթանման, ժողովրդավարական խորհրդարանական մշակույթի ամրապնդման, կարողությունների զարգացման ծրագրերի եւ այլ ոլորտներում ԵՄ-ի հետ շարունակական համագործակցություն ապահովելու ուղղությամբ»,- նշել է Ալեն Սիմոնյանը:

Ըստ աղբյուրի՝ Վասիլիս Մարագոսը բարձր է գնահատել Հայաստանի խորհրդարանի եւ Եվրոպական միության միջեւ առկա փոխգործակցությունը՝ ընդգծելով հարաբերությունների կարեւորությունը:

«Ազգային ժողովն առանցքային դերակատարում ունի Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության միջեւ հարաբերությունների սերտացման հարցում: Համատեղ ջանքերի շնորհիվ մենք կկարողանանք հաջողությամբ առաջ մղել այն ծրագրերը, որոնց իրականացմանը ձեռնամուխ ենք եղել, եւ հնարավորություն կունենանք ընդլայնելու Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակը»,- ասել է ԵՄ դեսպանը:

Նշվում է, որ հանդիպմանը քննարկվել են Հայաստան-ԵՄ համագործակցության շրջանակում տնտեսական եւ էներգետիկ ոլորտների զարգացման հեռանկարները, քաղաքական եւ անվտանգային երկխոսության ընդլայնման հնարավորությունները, Հարավային Կովկասում առկա անվտանգային իրավիճակը, ՀՀ քաղաքացիների համար ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացումը:

Անդրադարձ է կատարվել նաեւ ապրիլի 5-ին Հայաստանի վարչապետի, Եվրահանձնաժողովի նախագահի եւ ԱՄՆ պետքարտուղարի միջեւ Բրյուսելում կայացած հանդիպմանը, որտեղ քննարկվել են Հայաստանի զարգացմանն ու դիմակայունությանն ուղղված հարցեր:

ԱԿԱՆԱԶԵՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Թուրքական GazeteKars լրատվականի տվյալով՝ Երեւան-Անկարա հարաբերությունների կարգավորման գործընթացի շրջանակում քայլեր են ձեռնարկվում:

Մասնավորապես՝ «Հայաստան-Թուրքիա սահմանին, մասնավորապես՝ Կարսի Աքյաքա շրջանի Իբիշ գյուղի տարածքում արդեն 20 օր է՝ ականազերծման աշխատանքներ են իրականացվում: Նշվում է, որ ականազերծմամբ իսրայելական ընկերություն է զբաղվում: Ըստ աղբյուրի՝ Հայաստանի եւ Թուրքիայի ներկայացուցիչների եւ ղեկավարների միջեւ քննարկումներից հետո տնտեսական շահերը եկել են առաջին պլան:

ՑԱՆԿԱՆՈՒՄ Է ՆՊԱՍՏԵԼ ՕՐԱԿԱՐԳԻՆ

Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղություն ապահովելու հնարավորություններ կան: Այս մասին ադրբեջանական լրատվամիջոցներից մեկի հարցմանն ի պատասխան նշել են Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Տոյվո Կլաարի գրասենյակի մամուլի ծառայությունից:

Նշվել է, որ ԵՄ-ն ողջունում է կողմերի միջեւ այս հարցի վերաբերյալ տեքստերի նախագծերի մշտական փոխանակումը, այդ թվում՝ Երեւանի կողմից Բաքվին ուղարկված վերջին առաջարկները:

«Մենք մշտական կապի մեջ ենք երկու կողմերի հետ: Կարծում ենք, որ կողմերի միջեւ մի քանի տարվա բանակցություններից եւ քննարկումներից հետո, հատկապես Շառլ Միշելի աջակցությամբ, ի հայտ են եկել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղություն ապահովելու տարրեր»,- ասվում է Կլաարի պատասխանում:

Հարցին՝ առաջիկայում ԵՄ հատուկ ներկայացուցիչն առաջիկայում նախատեսո՞ւմ է այցելել Հայաստան եւ Ադրբեջան, գրասենյակից հայտնել են, որ Տոյվո Կլաարը հաճախ է այցելում տարածաշրջան եւ կշարունակի այցերը՝ նպաստելու կարգավորման գործընթացին եւ խաղաղության օրակարգին:

ԱՅՑԵԼԵԼ Է ՈՍԿԵՊԱՐ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը երեկ՝ ապրիլի 12-ին, այցելել է Տավուշի մարզի Ոսկեպար գյուղ: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Վարդանյանը ArmLur.am-ի հետ զրույցում հաստատեց մեր տեղեկությունը եւ ասաց, որ այցը պայմանավորված է այնտեղի վերջին զարգացումներով:

«Կոնկրետ չեմ կարող ասել՝ ինչ քայլեր կձեռնարկվեն, բայց ինչ էլ որ լինի, հանրությունը տեղյակ կլինի: Չեմ կարող ստույգ ասել, թե որքան ժամանակով է գնացել, իրավիճակից կախված տեղում պարզ կդառնա»,- նշել էր Լ. Վարդանյանը:

Հիշեցնենք, որ քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը մի խումբ մարդկանց հետ արդեն 3 շաբաթ է ինչ տեղափոխվել են Ոսկեպար եւ ապրում են ոսկեպարցիների կողքին:

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ Է

Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունել է Վրաստանի արդարադատության նախարար Ռատի Բրեգաձեին:

Ինչպես տեղեկացնում է ՀՀ վարչապետի աշխատակազմը իր տարածած հաղորդագրության մեջ, Նիկոլ Փաշինյանը կարեւորել է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ համագործակցության շարունակական զարգացումը տարբեր ոլորտներում, այդ թվում՝ արդարադատության բնագավառում:

Վարչապետը գոհունակությամբ է նշել, որ Վրաստանի հետ փոխգործակցությունը գտնվում է բարձր մակարդակի վրա, ինչին նպաստում են նաեւ փոխայցելությունները:

Նիկոլ Փաշինյանը կարեւորել է նաեւ փորձի փոխանակումը՝ արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումներն արդյունավետ կյանքի կոչելու ուղղությամբ:

Վրաստանի արդարադատության նախարարը նշել է, որ հայ գործընկերների հետ ունեն սերտ համագործակցություն եւ համոզմունք հայտնել, որ այս այցը նոր ազդակ կհաղորդի երկկողմ կապերի ամրապնդմանն ու ընդլայնմանը:

Ռատի Բրեգաձեն ընդգծել է Հայաստան-Վրաստան ռազմավարական գործընկերության վերաբերյալ ստորագրված փաստաթղթի կարեւորությունը:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել կոռուպցիայի դեմ պայքարի, արդարադատության ոլորտում բարեփոխումների եւ այլ հարցերի շուրջ:

ԱԽ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԼԻՏՎԱՅԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԵՏ

Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանն ապրիլի 12-ին Վիլնյուսում հանդիպել է Լիտվայի արտաքին գործերի նախարար Գաբրիելիուս Լանդսբերգիսի հետ:

Արմեն Գրիգորյանն այս մասին գրել է «Ֆեյսբուք»-ի իր էջում:

«Հանգամանալից ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության տարբեր ուղղությունները եւ ներկայիս առաջնահերթությունները: Անդրադարձել եմ Հարավային Կովկասում տիրող անվտանգային իրավիճակին, առկա մարտահրավերներին եւ դրանց հաղթահարման ուղղությամբ հայկական կողմի գործադրվող ջանքերին:

Հանդիպման ընթացքում քննարկել ենք ապրիլի 5-ի ՀՀ-ԱՄՆ-ԵՄ հանդիպման արդյունքները, ինչի շրջանակներում ԱԳ նախարարը հայտնել է Լիտվայի պատրաստակամությունն աջակցելու ՀՀ-ին առաջ մղելու ՀՀ-ԵՄ օրակարգային հարցերը:

Քննարկել ենք նաեւ Հայաստան-Լիտվա օրակարգային հարաբերությունները՝ մատնանշելով երկկողմ համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը»,-գրել է Գրիգորյանը:

FREEDOM HOUSE

ԱՆԱՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՍԿԱԾԻ ՏԱԿ

Freedom house-ը զեկույց է հրապարակել, որում կեռ առ կեռ նշված է, թե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ինչպես է խեղաթյուրել ժողովրդավարություն եզրույթը:

Freedom house-ը մասնավորապես անդրադարձել է ամենակարեւոր կառույցներում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից սիրված մարդկանց ղեկավար պաշտոններում նշանակելու փաստին: Freedom house-ը զեկույցում հարցականի տակ է դրել նաեւ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի անաչառությունը:

Այսպիսով՝ «2022 թվականին Հայաստանի արդարադատության նախարարությունը նախաձեռնեց փոփոխություններ ընտրական օրենսգրքում եւ հարակից օրենսդրությունում: Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարություն իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) եւ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) ողջունել են փոփոխությունների նախագիծը՝ մասնավորապես գովաբանելով դրանց մեկնարկին նախորդած խորհրդակցությունների եւ հանրային քննարկումների ընդգրկունությունը: Սա հատկապես ուշագրավ է, քանի որ նախորդ տարիներին ընտրություններից կարճ ժամանակ առաջ նախաձեռնված հապճեպ փոփոխությունները, հիմնականում՝ արտահերթ ընտրությունները, սովորական էին:

Այնուամենայնիվ, զեկույց Վենետիկի հանձնաժողովի եւ ԺՀՄԻԳ-ի որոշ նախկին առաջարկությունների չներառելը ցավով է փաստում. առաջարկություններ որոնք Հայաստանը դեռեւս չի գործել, որոնք ուղղված են ընտրական շեմերին, մարտահրավերների ներկայացման ժամկետներին, վերահաշվարկներին եւ ընտրական գործընթացի այլ ասպեկտներին: Այս փոփոխությունները կատարելը կպահանջի հետագա փոփոխություններ՝ խախտելով ընտրական օրենսդրության կայունությունը պահպանելու լավ պրակտիկան:

2022 թվականի վերջին Հայաստանի Ազգային ժողովը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) նախագահ ընտրեց Վահագն Հովակիմյանին, ով հայտնի էր որպես Փաշինյանի *հավատարիմ մարդ.* թեեւ Հովակիմյանի ընտրությունն այդ պաշտոնում օրինական էր, նա ընտրվելուց չորս օր առաջ մնաց Ազգային ժողովի պատգամավոր՝ «Քաղաքացիական պայմանագրի» անդամությամբ եւ ընտրություններում քվեարկեց ինքն իրեն՝ ԿԸՀ ղեկավար նշանակվելու համար:

Հովակիմյանի ընտրությունը քաղաքացիական հասարակության մեջ մտահոգություն առաջացրեց, որ այն կվտանգի ԿԸՀ-ի անկախությունն ու չեզոքությունը եւ վտանգի տակ կդնի վերջին տարիների առաջընթացը: Այնուամենայնիվ, նոր նախագահը մի քանի դեպքերում գործել է համագործակցային եւ ներառական՝ քաղաքացիական հասարակության նկատմամբ: Այնուամենայնիվ, Հովակիմյանի եւ ԿԸՀ-ի որոշ գործողություններ Երեւանի ավագանու ընտրությունների վերաբերյալ քաղաքացիական հասարակության շրջանում կասկածներ են առաջացրել նրա անաչառության վերաբերյալ»:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՉԵՆ ՄԱՄՆԱԿՑԵԼ ՀԱՊԿ ՆԻՍՏԻՆ

Հայաստանի գլխավոր շտաբի ներկայացուցիչները չեն մասնակցել Ռուսաստանի Դաշնության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ Վալերի Գերասիմովի ղեկավարությամբ տեղի ունեցած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ պետությունների ռազմական համագործակցության զարգացման հարցերով ռազմական խորհրդի 23-րդ նիստին:

Այս մասին նշվում է ՌԴ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

Հանդիպմանը մասնակցել են Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի եւ Տաջիկստանի զինված ուժերի գլխավոր շտաբների պատվիրակությունները, ինչպես նաեւ Միացյալ շտաբի եւ ՀԱՊԿ քարտուղարության ներկայացուցիչներ:

Հանդիպման ընթացքում կողմերը վերլուծել են ՀԱՊԿ պատասխանատվության ոլորտում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, անդամ երկրներին սպառնացող սպառնալիքներն ու անվտանգության մարտահրավերները, ինչպես նաեւ նախանշվել են ռազմական ոլորտում հետագա փոխգործակցության ուղիները:

«Մենք պայմանավորվեցինք շարունակել աշխատանքը գոյություն ունեցող սպառնալիքները չեզոքացնելու եւ կազմակերպության ռազմական ներուժը բարելավելու ուղղությամբ», - հայտնել է Գերասիմովը:

Նրա խոսքով՝ անդամ երկրների ռազմական ղեկավարները համաձայնել են առաջադեմ մարտական փորձը ներդնել ՀԱՊԿ զորքերի պատրաստման պրակտիկայում:

Գերասիմովը նշել է, որ ՀԱՊԿ ռազմական կոմիտեի նիստը տեղի է ունեցել գործնական եւ կառուցողական մթնոլորտում, եւ արդյունքները կնպաստեն ռազմական անվտանգության առաջանցիկ զարգացմանն ու ամրապնդմանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՇՎԵԴ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Շվեդիայի պատվիրակության անդամներն այցելել են Եղեգնաձոր, Իջեւան, Մարտունի, Ջերմուկ, Գորիս եւ Կապան քաղաքների առաջնագծի օպերատիվ հենակետեր՝ հանդիպելու Հայաստանում ԵՄ դիտորդական առաքելության կազմում Ադրբեջանի հետ սահմանին պարեկություն իրականացնող շվեդ դիտորդների հետ:

Այս մասին նշվում է Հայաստանում Եվրոպական դիտորդական առաքելության X-ի միկրոբլոգի գրառման մեջ:

«Շվեդիայի Խաղաղության, անվտանգության եւ զարգացման գործակալության, ոստիկանության եւ արտակարգ իրավիճակների գործակալության շվեդական պատվիրակությունն այցելել է Եղեգնաձոր, Իջեւան, Մարտունի, Ջերմուկ, Գորիս եւ Կապան քաղաքների հենակետեր՝ հանդիպելու Շվեդիայի առաքելության անդամների հետ»,- ասվում է գրառման մեջ:

Նշվում է, որ ՀՀ-ում ԵՄ առաքելության կազմում Շվեդիան ներկայացնող 10 փորձագետ կա:

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ

Ապրիլի 12-ին ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն ընդունել է ՀՀ-ում Ավստրալիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Ուիլյամ Գիրինգին: Այս մասին տեղեկացնում են ՀՀ ՊՆ-ից:

Հանդիպման ընթացքում քննարկվել են պաշտպանության բնագավառում Հայաստան-Ավստրալիա համագործակցության հնարավորություններին եւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող մի շարք հարցեր:

Դեսպանի խնդրանքով նախարարը ներկայացրել է ՀՀ ԶՈՒ բարեփոխումների ընթացքը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀՈՐ ԵՎ ՈՐԴՈՒ ՀԱՆՑԱՎՈՐ «ԲԱՆԴԱՆ»

ՀՀ ֆնչական կոմիտեի Արարատի մարզային ֆնչական վարչության Վեդիի ֆնչական բաժնում կատարված նախաֆնությամբ պարզվել են Արմավիրի մարզի 43-ամյա բնակչի կողմից ֆեռրեն պատժելի մի շարք արարքներ, այդ թվում՝ նաեւ որդու հետ ավազակություն կատարելու վերաբերյալ էական հանգամանքներ:

Մասնավորապես, 2022թ. հունիսի 20-ին կայացված որոշմամբ, Արմավիրի մարզի 43-ամյա բնակչի նկատմամբ 2003թ. ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 243.1-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական հետապնդում: Նա մեղադրվել է այն բանում, որ 2021 թվականի հոկտեմբերին, չարաշահելով Կոտայքի մարզի Ջովունի բնակավայրի բնակչի վստահությունը, վերջինիս պատկանող «MERCEDES-BENZ E 230» մակնիշի ավտոմեքենան 3.000 ԱՄՆ դոլարի դիմաց, գումարը մաս-մաս վճարելու պայմանով գնելուց, դրանից 700 ԱՄՆ դոլարը վճարելուց հետո ավտոմեքենան վերավաճառել է եւ հրաժարվել վճարել գումարի մնացած մասը՝ այդ կերպ խարդախություն կատարելով Թալինի բնակչին պատճառելով խոշոր չափերի վնաս: Բացի այդ, 3 տարի ժամկետով զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից՝ վերջինս 2021թ. դեկտեմբերին վարել է տրանսպորտային միջոց՝ բռնվելով պարեկային ծառայողների կողմից: 2022 թվականի հունիսի 28-ին նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը եւ հայտարարվել հետախուզում: Հետագայում պարզվել է, որ 43-ամյա նշված տղամարդը, որդու հետ ավազակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով եւ այդ նպատակով, 2023թ. նոյեմբերի 25-ին՝ ժամը 23:26-ին, տաքսի են պատվիրել եւ Երեւան քաղաքի բնակչի կողմից վարած «Opel Astra» մակնիշի տաքսի ավտոմեքենայով ուղեւորվել դեպի Արարատի մարզ: Հասնելով Փոքր Վեդի բնակավայրի հարակից դաշտամիջյան հատված՝ հայրն աջ ձեռքով բռնել է վարորդի պարանոցից եւ խոշոր չափերի գույքը հափշտակելու նպատակով նրանից պահանջել է իրենց հանձնել «Opel Astra» մակնիշի տաքսի ավտոմեքենան, եղած 11.000 ՀՀ դրամ կանխիկ գումարը եւ 120.000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսը՝ սպառնալով պահանջը չկատարելու դեպքում սպանել նրան: Վարորդը ստիպված կատարել է ներկայացված պահանջը, ինչից հետո հայր եւ որդի ավտոմեքենայով հեռացել են՝ Թալինի բնակչին պատճառելով ընդհանուր 1.208.000 ՀՀ դրամի գույքային վնաս: Հիշյալ հանցավոր արարքները կատարելու համար եւս 43-ամյա տղամարդու, ինչպես նաեւ նրա որդու նկատմամբ, ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 7-րդ կետերով, հարուցվել է հանրային քրեական հետապնդում, հետախուզում է հայտարարվել նաեւ նրա որդու նկատմամբ: Քրեական վարույթի շրջանակներում օպերատիվ տվյալներ են ստացվել հետախուզման մեջ գտնվող հիշյալ տղամարդու գտնվելու վայրի մասին: Երբ ՆԳՆ ոստիկանության Արարատի բաժնի ծառայողները, նշված տվյալներն իրացնելով, փորձել են 2023թ. դեկտեմբերի 22-ին Փոքր Վեդի գյուղի տներից մեկի բակում ձերբակալել ենթադրյալ հանցագործություններ կատարած 43-ամյա անձին, վերջինս իր մոտ ապօրինի կերպով կրվող «EKOL P29» մոդելի ողորկափող հրազենի ձեւափոխված ատրճանակով սպառնացել է իրեն մոտենալու դեպքում սպանել նրանց՝ այդ կերպ միջամտելով ոստիկանության ծառայողների օրինական ծառայողական գործունեությանը: Այդուհանդերձ տղամարդը ձերբակալվել է: Նշված դեպքի առթիվ եւս վարույթ է նախաձեռնվել, որը միացվել է վերոհիշյալ քրեական վարույթին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ 1 ՏԱՐՈՎ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Նարեկ Մալյանը դատարանի որոշմամբ այսօր դատապարտվեց 1 տարի ժամկետով ազատազրկման:

Դատարանը նրա նկատմամբ վերջնական պատիժ սահմանեց՝ նշելով, որ նա անազատության մեջ կմնա 5 ամիս 7 օր, եւ Նարեկ Մալյանից հօգուտ պետության կբռնագանձվի 105 հազար եւ 198 հազար դրամ:

Կալանքը թողնվեց անփոփոխ մինչեւ դատական վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Նարեկ Մալյանը կալանավորվել էր ՀՀ Քրեական օրենսգրքի 329 հոդվածով (Անձի կամ անձանց խմբի նկատմամբ քաղաքական հայացքներով պայմանավորված ատելություն, անհանդուրժողականություն կամ թշնամանք քարոզելուն ուղղված հրապարակային խոսքը): Սահմանված պատիժը՝ 1-4 տարի:

Մեղադրող կողմը պահանջել էր 3 տարի 3 ամիս ազատազրկում: Նշենք, որ Նարեկ Մալյանն իրեն մեղավոր չի ճանաչում եւ կալանավորված է արդեն 7 ամիս:

ՓԱՍՏԻ ԱՌԱՔ ԵՆ ԿԱՆԳՆԵԼ

2024 թվականի ապրիլի 10-ին Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի «Ներքին Խնձորեսկ» հատվածում տեղի ունեցած միջադեպի առթիվ իրականացված ծառայողական քննության արդյունքում պարզվել է, որ ՀՀ ԱԱԾ ՍՁ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, նշված հատվածում սահմանապահ ծառայություն իրականացնող վերակարգի ավագ Յ.Ք-ն, տեղեկանալով հովվի եւ նրա հոտի կողմից մոլորվելու հետեւանքով Ադրբեջանի տարածքում հայտնվելու եւ հովվի կողմից Հայաստանի տարածք վերադառնալու հանգամանքի մասին, վերջինիս եւ վերակարգի մեջ գտնվող սահմանապահ ծառայողների հետ փորձել են հատել ՀՀ պետական սահմանը եւ վերադարձնել հոտը՝ այդ կերպ խախտելով սահմանապահ ծառայություն կրելու կանոնները, որն անզգուշությամբ պատճառել է էական վնաս, այն է՝նշված սահմանապահ հատվածում սկսվել է անհարկի հրաձգություն, ակնհայտ վտանգի է ենթարկվել մարդկանց կյանքն ու առողջությունը, նկարագրված գործողություններն առաջացրել են պետության անվտանգության համար սպառնալիք, ինչպես նաեւ պետական սահմանի նշված հատվածում պատշաճ հսկողության բացակայության վիճակ:

Միջադեպի արդյունքում վիրավորում է ստացել Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության զինծառայող: Ափսոսանք հայտնելով կատարվածի կապակցությամբ՝ միեւնույն ժամանակ համապատասխան միջոցներ են ձեռնարկվել ՀՀ ԱԱԾ ՍՁ զինծառայողների կողմից սահմանապահ գործառույթ իրականացնելիս սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խստագույնս պահպանելու եւ նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:

Ծառայողական քննության արդյունքներով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով առերեւույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում է ներկայացվել ՀՀ քննչական կոմիտե, որտեղ նախաձեռնվել է քրեական վարույթ, իրականացվում է նախաքննություն՝ դեպքի հանգամանքները բացահայտելու, մեղավոր անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու համար:

ՔՆՆՉԱԿԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԸ

Կառավարության այսօրվա որոշմամբ՝ Պետական գույքի կառավարման կոմիտեին ամրացվեց Դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման լիազորության շրջանակում կնքված հաշտության համաձայնությամբ պետությանը վերադարձված՝2 միլիարդ 18 միլիոն 400 հազար դրամ շուկայական արժեքով Ավան վարչական շրջանի Աճառյան փողոցում գտնվող՝16.013 քմ մակերեսով հողամասը:

Հիշեցնենք, որ հաշտության համաձայնությունը հաստատվել էր Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 27-ի վճռով:

Գույքի նկատմամբ արդեն իսկ գրանցվել է Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքը:

Հավելենք, որ վերջին վեց ամիսների ընթացքում՝ 2023 թվականի 4-րդ եռամսյակում եւ 2024 թվականի առաջին եռամսյակում Դատախազության երկու բացառիկ լիազորությունների՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման եւ պետական շահերի պաշտպանության շրջանակում, պետությանն է վերադարձվել շուրջ 10 միլիարդ դրամի գույք:

Նշված ժամանակահատվածում օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դրանից հետո ընդունված կառավարության որոշմամբ, միայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակում, ՀՀ սեփականությանն է փոխանցվել 7 անշարժ եւ 1 շարժական գույք՝ ընդհանուր շուրջ 4 միլիարդ 118 միլիոն դրամ արժեքով. ՀՀ սեփականությանն է փոխանցվում նաեւ շուրջ 609 միլիոն դրամ:

ԿԱՇԱՌՔ՝ ԲԱՆԱԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԴԻՄԱՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սիմակ Աղբալյանին մեղադրանք է առաջադրվել առ այն, որ նա, լինելով պաշտոնատար անձ՝ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման զորահավաքային վարչության պետ, իր ծառայողական լիազորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ՀՀ Տավուշի մարզի Իջեւան քաղաքի բնակիչ Արմեն Սպարտակի Գյոզալյանի որդու՝ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 1 ստորաբաժանումում հաշվառված, 2023 թվականի ամառային զորակոչին զորակոչման ենթակա Սլավիկ Արմենի Գյոզալյանի օգտին հովանավորչություն եւ այլ ապօրինի գործողություն իրականացնելու՝ վերջինիս հիվանդության համար ոչ պիտանի ճանաչելուն նպաստելու նպատակով, 2023 թվականի ապրիլի 14-ին Արմեն Գյոզալյանից պահանջել եւ Աչաջուր բնակավայրի իր առանձնատանը նրանից ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 6.000.000 ՀՀ դրամ կաշառք:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ապրիլի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 78 դեպք, որից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻՊԼՈՄ ՉՈՒՆԵՆԱԼՈՎ՝ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ ՕԳՆԱԿԱՆ

Ապրիլի 11-ին ԱԺ-ում կառավարության ծրագրի՝ 2023 թվականի կատարման արդյունքների զեկույցի քննարկման վերաբերյալ եզրափակիչ ելույթում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց. « Իմ վարչապետության օրոք իմ ընտանիքի անդամը դատվել ա, դուք մտածում եք՝ քեռին պուճուր վախտ ինձ շոկոլադ չի՞ տվել, հիմա վարչապետ եմ դարձել վրե՞ժ եմ լուծում: Քեռին շոկոլադ տվել ա, բա որ խոսում ենք օրենքի առաջ բոլորի հավասարության մասին, էդ ի՞նչ ա դա»:

Նիկոլ Փաշինյանի դատված հարազատը ամենեւին էլ նրա ընտանիքի անդամը չէ, դատվածությունն էլ ընդամենը տուգանք է: Նիկոլ Փաշինյանը խորհրդարանում այդ հայտարարությունն արել է իր քեռու տղայի՝ Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղի բնակիչ Մամիկոն Հովհաննիսյանի մասին: 2019թ. ապրիլի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի վարույթ է ընդունվել ինստիտուտի դիպլոմն առերեւույթ կեղծելու դեպքի առթիվ ԱԱԾ-ում հարուցված քրեական գործը: ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ինժեներ Մամիկոն Հովհաննիսյանը 2019թ. փետրվար ամսին, կադրերի բաժին ներկայացնելով Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը 1993թ. «գյուղատնտեսության մեքենայացում» մասնագիտությամբ ավարտելու եւ ինժեներ-մեխանիկի որակավորում ստանալու մասին դիպլոմի պատճենը, նշանակվել է հիշյալ կազմակերպությունում բաժնի պետ-տնօրենի տեղակալի պաշտոնում: 2019թ. հունիսի 6-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Ջոյա Ջաքինյանը վճռել է Մամիկոն Նապոլեոնի Հովհաննիսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 1-ին մասով եւ նրան դատապարտել 200 հազար դրամի չափով տուգանքի: Սակայն վարչապետ Նիկոլ Փաշինյանի քեռու տղային «Դիլիջան» ազգային պարկում նորից են պաշտոն տվել: Մ. Հովհաննիսյանը 2022 թվականի հունիսի 8-ից ՊՈԱԿ-ում զբաղեցնում է տնօրենի օգնականի պաշտոնը: Վերջինս ունի միջնակարգ կրթություն, աշխատանքի ընդունվելիս ներկայացրել է տեղեկանք այն մասին, որ սովորում է Հայաստանի եվրոպական համալսարանի Իջեւանի մասնաճյուղում, «Կառավարում» մասնագիտությամբ»:

ԱՆՏԵՂՅԱԿ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին օրերս հարցում էինք ուղարկել այն հարցով, թե Տավուշի մարզի եւ Վրաստանի սահմանագոտում երբ է նախատեսվում սահմանազատման ու սահմանագծման աշխատանքներ իրականացնել: Մարզպետարանից պատասխանել են. « Տավուշի եւ Վրաստանի սահմանագոտում սահմանազատման եւ սահմանագծման աշխատանքների գործընթացի վերաբերյալ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմը որեւէ գործառույթ չունի» :

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ՋԱՆՔԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն այսօր ընդունել է Եվրոպայի խորհրդի գրասենյակի ներկայացուցիչներին՝ քննարկելու «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետպատերազմյան համատեքստում» ԵԽ ծրագրի մանրամասները:

Ինչպես տեղեկացնում է ՀՀ ԿԳՄՍ նախարարությունն իր տարածած հաղորդագրության մեջ, հանդիպմանը ներկա են եղել Եվրոպայի խորհրդի գլխավոր տնօրինության՝ երեխաների իրավունքների հարցերով համագործակցության եւ կարողությունների զարգացման ստորաբաժանման ղեկավար Զարուհի Գասպարյանը, ԵԽ ծրագրի հայաստանյան ղեկավար Արտյոմ Սեդրակյանը, ներկայացուցիչներ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից:



Ողջունելով հյուրերին՝ Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է Եվրոպայի խորհրդի հետ համագործակցության բարձր մակարդակն ու դրա հետագա զարգացումը: Անդրադառնալով ԼՂ-ից բռնի տեղահանված բնակիչների կարիքներին՝ Արթուր Մարտիրոսյանը նախ ներկայացրել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող աջակցության ծրագրերը՝ միտված նրանց հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ կրթության իրավունքի իրացմանը:

Փոխնախարարի խոսքով՝ ԼՂ-ից բռնի տեղահանված ավելի քան 17 հազար սովորող ընդգրկվել է ՀՀ հանրակրթական դպրոցներում, ապահովվել է ավելի քան 900 ուսանողի կրթության շարունակականությունն ուսումնարաններում եւ քոլեջներում, եւս 1834 ուսանողի՝ բուհերում, որոնց տրամադրվել է ուսման վարձի փոխհատուցում: Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրել է՝ կրթության շարունակականությունն ապահովելու հնարավորություն է ընձեռվել նաեւ այն ուսանողներին, որոնց ուսման վարձը նախկինում վճարվել է ԼՂ իշխանությունների կամ նրանց ընտանիքների կողմից:

Եվրոպայի խորհրդի գլխավոր տնօրինության՝ երեխաների իրավունքների հարցերով համագործակցության եւ կարողությունների զարգացման ստորաբաժանման ղեկավար Զարուհի Գասպարյանը շնորհակալություն է հայտնել ընդունելության համար եւ տեղեկացրել՝ «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետպատերազմյան համատեքստում» ԵԽ ծրագրով նախատեսվում է իրականացնել երեխաներին սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների վերապատրաստումներ ու ստեղծել կարողությունների զարգացման ձեռնարկ՝ նախատեսված թե՛ ուսուցիչների, թե՛ սոցիալական աշխատողների համար: Այս համատեքստում կարեւորվել է ԿԳՄՍ նախարարության հետ սերտ համագործակցությունը:

Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է նմանօրինակ ձեռնարկը բուհական համակարգում ներառելու հնարավորությունը՝ երկարաժամկետ զարգացման հեռանկարում: Նա տեղեկացրել է՝ դպրոցներում սեպտեմբերից պարտադիր է հոգեբանի հաստիքը, գործում են Հանրապետական մանկավարժահոգեբանական եւ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները, սակայն մարտահրավերային իրավիճակները պահանջում են նոր ջանքեր, ինչպես նաեւ վերապատրաստման նոր ծրագրեր՝ այս կառույցների ներգրավմամբ:

Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետպատերազմյան համատեքստում» ԵԽ ծրագրի հայաստանյան ղեկավար Արտյոմ Սեդրակյանն ընդգծել է՝ հիմնական ուշադրությունն ուղղվելու է ԼՂ-ից բռնի տեղահանված հատկապես այն երեխաներին, որոնք մնացել են առանց ընտանեկան եւ ծնողական խնամքի:

Արթուր Մարտիրոսյանն աշխատանքների կազմակերպման արդյունավետության նպատակով կարեւորել է դաշտում նմանօրինակ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների սերտ համագործակցությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ՝ ՀՀ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն ներկայացրել է, թե ինչպես օտարերկրյա քաղաքացիները պետք է մուտք գործեն «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»:

««Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ» մուտքն օտարերկրյա քաղաքացիների համար իրականացվում է ՀՎՀՀ, օգտվողի անուն եւ գաղտնաբառի միջոցով: Համակարգի հասանելիությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից:

«Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ»-ում օտարերկրյա քաղաքացիների համար գործում է 2 տեսակի ստորագրություն՝ CoSign (ՀԾՀ-ով) եւ CoSign ՀՎՀՀ-ով տեսակները, որոնք տրամադրում է «Էկենգ» ՓԲԸ-ն: «Էկենգ» ՓԲԸ-ի կողմից CoSign ՀՎՀՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրությունը տրամադրվում է հետեւյալ 2 դեպքում՝ եթե օտարերկրյա քաղաքացիի չունի ՀԾՀ եթե օտարերկրյա քաղաքացին, անկախ ՀԾՀ ունենալու հանգամանքից, չի գտնվում Հայաստանի Հանրապետության տարածքում:

Մնացած բոլոր դեպքերում տրամադրվում է CoSign (ՀԾՀ-ով) տեսակի էլեկտրոնային ստորագրություն»,- նշված է պետական եկամուտների կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ:

CoSign ՀՎՀՀ-ով տեսակի էլեկտրոնային ստորագրությունը ձեռք բերելու համար օտարերկրյա քաղաքացին, նախքան «Էկենգ» ՓԲԸ-ին դիմելը, պետք է հաշվառվի հարկային մարմնում (ձեռք բերի ՀՎՀՀ) եւ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների սպասարկման վարչության կողմից ստանա «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգ» մուտքի թույլտվություն:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 20 պատահար. 32 մարդ ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Երեւանի «Սասունցի Դավիթ» կայարանից երկաթուղով շրջայց է կատարել՝ դիտարկելու Ակադեմիական քաղաքի հատված տանող երկաթուղային ենթակառուցվածքները եւ դրանք զարգացնելու հնարավորությունները:

Ինչպես տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմից, վարչապետին ուղեկցել են կառավարության շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարները՝ Երեւանի քաղաքապետը, Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագիծը նախագծող gmp International GmbH Architects and Engineers ընկերության ներկայացուցիչներն ու ճարտարապետական խմբի անդամները:

Նշվում է, որ վարչապետը կանգառներ է ունեցել «Սպանդարյան» եւ «Ալմաստ» կայարաններում, որտեղ շրջայցի մասնակիցների հետ տեղում քննարկվել են ապագա ճանապարհային ցանցի հիմման հնարավորությունները: Կարեւորվել է տարբեր ուղղություններից Ակադեմիական քաղաք տանող ճանապարհային ցանցի զարգացումն ու այդ ուղղությամբ համապատասխան աշխատանքների իրականացումը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐՆ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Հայաստանի խորհրդարանը վավերացրեց «Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երեւանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագիրը:

Պայմանագիրը վավերացնելու նախագիծն ընդունվեց Ազգային ժողովի նիստում՝ ստանալով 57 կողմ, 26 դեմ ձայներ:

Հայաստանի Հանրապետության եւ Եվրոպական ներդրումային բանկի միջեւ «Երեւանի էներգաարդյունավետության երկրորդ փուլ» ֆինանսական պայմանագիրը ստորագրվել է 2023 թվականի նոյեմբերի 29-ին:

Պայմանագրով նախատեսվում է Եվրոպական ներդրումային բանկի կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրել 25 մլն. եվրո գումարի չափով վարկ՝ աջակցելու կայուն էներգաարդյունավետության բարելավմանը, որն ուղղված է Երեւանի հանրային շենքերին, մասնավորապես՝ մանկապարտեզներին եւ պոլիկլինիկաներին:

ՓՈԽԱՐԺԵՔՆԵՐ

ՀՀ կենտրոնական բանկից տեղեկացնում են, որ ապրիլի 12-ին, բանկի կողմից սահմանվել են հետեւյալ փոխարժեքները.

ԱՄՆ դոլարի փոխարժեքն աճել է 2.38 դրամով եւ կազմել 393.84 դրամ: Եվրոյի փոխարժեքը նվազել է 0.72 դրամով եւ կազմել 419.32 դրամ: Ռուսական ռուբլու փոխարժեքն աճել է 0.03 դրամով եւ կազմել 4.21 դրամ: Բրիտանական ֆունտի փոխարժեքն աճել է 0.27 դրամով եւ կազմել 491.12 դրամ:

ՇԱՀԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇՈՒԿԱ

«LEASING EXPO 2024/ «Քոլոր սարքավորումները մեկ հարթակում» անվանախաղեղ ցուցահանդեսն արդեն երկրորդ տարին է մեկ հարկի տակ է համախմբել տարատեսակ սարքավորումներ առաջարկող խոշոր կազմակերպություններ և ֆինանսական կառույցներ:

Միջոցառումը կազմակերպել է Big Projects ընկերությունը:

Big Projects ընկերության հանրային կապերի ղեկավար Դիանա Հարոյանը նշեց, որ իրենց թիմը ջանք չի խնայել, որպեսզի ընկերության հոբելյանական 10-րդ ցուցահանդեսը լինի միջազգային չափանիշներին համապատասխան:

«Ցուցահանդեսը հնարավորություն է ընձեռում ծանոթանալ տեղական եւ միջազգային շուկայի տեխնիկական եւ տեխնոլոգիական նորարարություններին եւ առաջարկներին, ձեռք բերել վերջին սերնդի նորագույն սարքավորումներ՝ հատուկ առաջարկներով, շահավետ համագործակցության հնարավորությամբ»,- նշեց նա:

Մեկ հարթակում ներկայացված են գյուղատնտեսական սարքավորումներ, արեւային պանելներ, տրանսպորտային միջոցներ եւ էլեկտրոմոբիլներ, շինարարական տեխնիկա, արդյունաբերական սարքավորումներ, Արտադրական սարքավորումներ, առողջապահական սարքավորումներ, HoReCa մատակարարներ, օդափոխության համակարգեր, սառնարանային տնտեսություն, ջերմոցային տնտեսություն, ֆինանսական կառույցներ:

LEASING EXPO 2024-ին լիզինգի նոր ու լայն հնարավորություններ է առաջարկում Armenian Leasing ընկերությունը:

«Արմենիան Լիզինգ Քամփնի» ՈՒՎԿ ՓԲԸ-ի համահիմնադիր, գլխավոր գործադիր տնօրեն Արսեն Բազիկյանը ընդգծեց, որ այս տարի իրենց գործող ծառայություններին ավելացրել են մի շարք նոր առաջարկներ, որոնք մշակված են միջազգային կառույցների հետ համատեղ եւ պետական սուբսիդավորման ծրագրերի օգնությամբ:

Շուրջ 4 տարի գյուղմթերքի վերամշակման ոլորտում սարքավորումների լայն տեսականի է առաջարկում Steelstandard ընկերությունը:

«Արփի Սոլար» ընկերության կորպորատիվ վաճառքի թիմի ղեկավար Սամվել Մարտիրոսյանը, ընդգծելով նման մեծամասշտաբ նախագծերի կարեւորությունը, նշեց, որ այստեղ հանրությանն առաջարկում են արեւային համակարգերի լայն տեսականի հատուկ առաջարկներով:

Պահեստային ապրանքների լայն տեսականի ունեցող «Պահեստ N1» ընկերությունը եւս հանդես է գալիս ճկուն գնային առաջարկներով:

Արդյունաբերական անվտանգության համակարգերի լայն տեսականի է առաջարկում SAFETY MINING ընկերությունը:

Ցուցահանդեսի գլխավոր հովանավորներն են՝ EcoVille եւ JCB (Ջեյ,սի, բի) ընկերությունները:

Հիշեցնենք, որ «LEASING EXPO 2024»-ն այս տարի անցկացվելու է «Մերիդիան» ցուցահանդեսային համալիրում՝ ապրիլի 12-14-ը: Ցուցահանդեսի մուտքն ազատ է եւ հանրության համար այն բաց է 11:00-20:00-ն:

«ՎԱՐԴԱՆԱՆՔ» ԶԲՈՍԱՅԳԻ

ՎԱՐՁԱԿԱԼԵԼ Է ՀՈՂԸ՝ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ

Երեւան քաղաքի Էրեբունի համայնքի նախկին ղեկավարը 2009 թվականին, նկատի ունենալով, որ ընկերության տնօրենն իր խորհրդական, ԱԺ նախկին պատգամավորի որդու մտերիմն է, ընկերության համար ձեռնտու պայմաններով կնքել է վարձակալության պայմանագիր: Այս մասին տեղեկացնում են ՀՀ դատախազությունից:

«Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով պարզվել է, որ Էրեբունի համայնքի նախկին ղեկավարը, անտեսելով Հողային օրենսգրքի վերաբերելի հոդվածները, Կառավարության համապատասխան որոշումը, համաձայն որի՝ համայնքի հողերից հողամասերի վարձակալության եւ կառուցապատման իրավունքը տրամադրվում է մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, չի ստեղծել մրցութային հանձնաժողով: Փոխարենը, Էրեբունի համայնքի նախկին ղեկավարը 2009 թվականի մայիսի 29-ին հրավիրել է համայնքի ավագանու նիստ, օրակարգում ներառել է «Վարդավառ» զբոսայգու եւ լճի զբաղեցրած տարածքը ՍՊ ընկերությանը կառուցապատման իրավունքով տրամադրելու հարցը:

Համայնքի ավագանին, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը եւ արձանագրելով, որ «Վարդավառ» զբոսայգին ունի լուրջ ներդրումների կարիք, իսկ Էրեբունու թաղապետարանը չունի ընթացիկ ծախսեր եւ ներդրումներ կատարելու բավարար ֆինանսական միջոցներ, տարածքը նախկինում վարձակալած ընկերությունը չի կարողացել բարեկարգման աշխատանքներ կատարել զբոսայգում, 2009 թվականի մայիսի 29-ի որոշմամբ՝ չեղյալ է ճանաչել «Վարդավառ» զբոսայգին վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ Էրեբունի համայնքի նախկին որոշումը եւ զբոսայգու ու լճի զբաղեցրած տարածքը 99 տարի ժամկետով՝ տարեկան 619 հազար 655 դրամ վարձավճարով, վարձակալական հիմունքներով ու կառուցապատման իրավունքով տրամադրել է ԱԺ նախկին պատգամավորի որդու մտերիմին պատկանող ՍՊ ընկերությանը:

Էրեբունի համայնքի նախկին ղեկավարը ավագանուն չի տեղեկացրել, որ Երեւանի քաղաքապետի, Լիոնի քաղաքապետի եւ Մեծ Լիոնի նախագահի միջեւ 2008 թվականին ստորագրված համագործակցության համաձայնագրով՝ Լիոն քաղաքը ֆինանսավորել է Էրեբունի համայնքին՝ բարեկարգելու «Վարդավառ» զբոսայգին (ներկայում՝ «Լիոնի այգի»):

Արդյունքում՝ չեն սահմանվել մրցույթի պայմանները, վճարի մեկնարկային չափը, չի կազմակերպվել բաց մրցույթ, իսկ տարեկան վարձավճարի մեկնարկային նվազագույն՝ 12 մլն 500 հազար դրամի փոխարեն, արդեն իսկ Լիոն քաղաքի միջոցներով բարեկարգվող «Վարդավառ» զբոսայգին վարձակալությամբ տրամադրվել է ՍՊ ընկերությանն ակնհայտ ցածր՝ 619 հազար 655 դրամով:

Դատախազը 2024 թվականի մարտի 29-ին հանրային քրեական հետապնդում է հարուցել Էրեբունի համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (պաշտոնական լիազորությունները չարաշահելը)»,- ասվում է հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ դատախազը 2024 թվականի ապրիլի 10-ին հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Հակակոռուպցիոն դատարան:

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՈԴՎԱԾ՝ ՆՎԻՐՎԱԾ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Հեղինակավոր www.euronews.com-ը հրապարակել է «Խաչատրյանի միջազգային փառատոն. հարգանքի տուրք Հայաստանի երաժշտական ժառանգությանը» վերնագրով ծավալուն հոդված: Այն Խաչատրյանի անվան միջազգային փառատոնի միջոցով անդրադարձ է հայկական մշակույթին:



Հոդվածում հեղինակն ընդգծում է. որ հայ մեծ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի անունը կրող միջազգային փառատոնը տարածաշրջանում դասական երաժշտության ամենահայտնի իրադարձություններից է, որի նպատակը միջմշակութային երկխոսությունը երաժշտության միջոցով խթանելն է՝ միաժամանակ բարձրացնելով Խաչատրյանի ժառանգության մասին իրազեկությունն ամբողջ աշխարհում:

Հրապարակման ենթավերնագրերից մեկի ներքո անդրադարձ է կատարվում նախորդ տարի անցկացված խաչատրյանական փառատոնին, որը նվիրված էր Արամ Խաչատրյանի 120-ամյա հոբելյանին եւ անցկացվում էր «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամի, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի եւ Երեւանի քաղաքապետարանի համատեղ ջանքերով: Ընդգծվում է, որ փառատոնը ներկայացրել է Խաչատրյանի արվեստը լայն ընդգրկմամբ ու հայտնի եւ տաղանդավոր մենակատարների ներգրավմամբ:

Հոդվածն առանձին բաժնում ներկայացնում է Հայաստանի մշակութային հարստությունը, որը հեղինակի խոսքով՝ հազարամյակներ ձգվող պատմություն ունի:

Ընդգծվում է, որ հույների եւ հռոմեացիների կողքին հայերն աշխարհի հնագույն թատերական ավանդույթների կրողն են: «Եվրանյուզի» հոդվածում պատկերված է նաեւ մայրաքաղաք Երեւանը՝ որպես դասական արվեստը հանրահռչակող քաղաք, որը մեծ սիրով հյուրընկալում է մեր ժամանակների ամենանշանավոր երաժիշտներին եւ կոլեկտիվներին՝ ներկայացնելով դասական արվեստը ու դասական երաժշտության միջոցով երկրում զարգացնելով զբոսաշրջությունը:

Հրապարակման մեջ հիշատակվում է նաեւ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը:

Նշվում է, որ այս տարի արդեն 20-րդ անգամ անցկացվող ստուգատեսի նպատակն է բացահայտել տաղանդավոր երաժիշտների աշխարհի տարբեր ծայրերից, ինչպես նաեւ հանրահռչակել Արամ Խաչատրյանի երաժշտությունը:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ՄՐՑԱՇԱՐԻՑ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը դուրս մնաց Մոնտե Կարլոյի «Մաստերս» մրցաշարից:

ATP Մաստերս շարքի այս մրցաշարի քառորդ եզրափակիչում Կարեն Խաչանովի մրցակիցը հույն թենիսիստ, աշխարհի 12-րդ ռակետ Ստեֆանոս Ցիցիպասն էր: Մոտ 1,5 ժամ ձգված մրցախաղում Ցիցիպասն առավելության հասավ երկու սեթում՝ 6:4, 6:2 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 17-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է: Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակչից:

ՓՅՈՒՆԻԿ–ԱԼԱՇԿԵՐՏ

Հայաստանի ֆուտբոլի առաջնության 28-րդ տուրի շրջանակներում «Փյունիկ»-ը սեփական հարկի տակ ընդունել էր «Ալաշկերտ»-ին:

Հանդիպման հաշիվն առաջինը բացեց «Փյունիկ»-ը: Աչքի ընկավ Գոնսալվեսը: Որպեսզի անց Լուկա Յուրիչիչը խփեց նաեւ թիմի երկրորդ գոլը: Առաջին կեսում «Ալաշկերտ»-ին չհաջողվեց բեկել հանդիպման ընթացքը: Երկրորդ կեսում «Ալաշկերտ»-ին հաջողվեց միայն հեղինակության գնդակ խփել: 89-րդ րոպեին գոլը խփեց Մենսանը:

«Փյունիկ»-«Ալաշկերտ»՝ 2:1:

Այս տուրի շրջանակներում կկայանա նաեւ «Արարատ-Արմենիա»-«Արարատ», «Ուրարատու»-ԲԿՄԱ, «Վեստ Արմենիա»-«Շիրակ» հանդիպումները:

ՄԱՐԶԱՇԱՊԻԿ՝ ՍՊԵՐՑՅԱՆԻՆ

«Կրասնոդարը» Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանին 100 համարով ակումբային հատուկ մարզաշապիկ է նվիրել:

«Կրասնոդարը» 23-ամյա ֆուտբոլիստին մարզաշապիկը նվիրել է ակումբի կազմում 100-րդ հանդիպումն անցկացնելու կապակցությամբ: Սպերցյանը հոբելյանական հանդիպումն անցկացրել է Ռուսաստանի Պրեմիեր լիգայի 23-րդ տուրի «Նիժնի Նովգորոդի» դեմ արտագնա խաղում, որի ընթացքում տուգանայինից կատարած հարվածով գրավել է մրցակցի դարպասը, իսկ դրվագներից մեկում նրա հարվածից հետո ինքնագոլ է գրանցվել:

Էդուարդ Սպերցյանը «Կրասնոդարի» կազմում անցկացրած 100 խաղում խփել է 31 գոլ, կատարել 24 գոլային փոխանցում:

ԼՈՒՐԵՐ

«ՇՈՈՒ–ՊԱՏԱՐԱԳ ՉԻ ԼԻՆՈՒՄ»

Երեկ՝ ապրիլի 12-ին, Ազգային ժողովում իր եզրափակիչ ելույթի ընթացքում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադառնալով ընդդիմության կողմից Տավուշի վերաբերյալ հայտարարություններին եւ հոգեւորականների այցերին, ասաց. «Ասում են՝ Տավուշում ձեզ սպասում են: Ես Ոսկեպար եւ Կիրանց գյուղերում վարչապետ լինելուց հետո մի քանի անգամ եմ եղել՝ եւ պաշտոնապես եւ ոչ պաշտոնապես: Էդ, որ որոշ հոգեւորականներ կան՝ հիշել են, որ էնտեղ եկեղեցի կա, շոու-պատարագներ են անում, քանի՞ անգամ են էս ընթացքում էդ եկեղեցու մասին հիշել ու քանի անգամ են էնտեղ պատարագ արել: Սա ստենդ ա՞փ է, ես չեմ հասկանում»,- ասաց վարչապետը:

ArmLur.am-ը կապ հաստատեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի հետ՝ իր մեկնաբանությունը լսելու նպատակով.

«Ինքը չի հասկանում, թող գնա, հասկացողի մոտ խորհուրդ հարցնի: Ուրեմն պիտի հարցնեինք, նոր գնայինք, որպեսզի ինքը իր մոտ նշի. մենք իր ծնունդից առաջ ենք իմացել Ոսկեպարի եկեղեցու մասին եւ շատ ուրիշ եկեղեցիների:

Շատ եկեղեցիներում պատարագներ ենք արել, որից ինքը տեղյակ չէ, ոչ էլ թշնամին, եւ երրորդ՝ շոու-պատարագ չի լինում, պատարագը կամ լինում է, կամ չի լինում»:

ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ 125

Անվանի նկարիչ, քանդակագործ Երվանդ Քոչարի 125-ամյակին նրա «Ընդվզում» ստեղծագործությունը մուրալ արվեստի տեսքով տեղ է գտել Երեւանի կենտրոնական փողոցներից մեկում՝ Պուշկին 62 հասցեում:

Թե՛ Սարյան, թե՛ Պուշկին փողոցներով քայլելիս մի պահ կանգ ես առնում, ուշադիր զննում վառ գույներով հարուստ աշխատանքն ու ցանկանում ավելին իմանալ:

«Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի շենքի վրա նախորդ տարի իտալացի նկարիչ Անտոնինո Պեռռոտտայի հետ եւ Հայաստանում Իտալիայի դեսպանատան աջակցությամբ մուրալ նախագիծ իրականացրինք: Հետո սկսեցինք մտածել Երեւան քաղաքի արտաքին ձեւավորումը մշակութային տարբեր ուղղություններով հարստացնելու մասին:

Լավագույն օրինակներից մեկն էլ ժամանակակից կերպարվեստի ոլորտում մուրալ ուղղությունն է»,- պատմում է Երվանդ Քոչարի 125-ամյակին նվիրված մուրալ նախագծի հեղինակ եւ ղեկավար Դավիթ Խաչատրյանը:

Խաչատրյանն այցելել է Երվանդ Քոչարի թանգարան եւ հստակ որոշել՝ հաջորդ մուրալ նախագիծը նվիրվելու է նկարչի հոբելյանին, քանի որ արվեստի այդ ուղղությամբ հնարավոր է երիտասարդներին ծանոթացնել դասականների ժառանգությանը: Իսկ ինչո՞ւ Արա Սարգսյանի եւ Հակոբ Կոջոյանի տուն-թանգարանի հարեւանությամբ եւ ինչո՞ւ Պուշկին փողոցում:

«Կարծում եմ՝ Երեւան քաղաքը պետք է ավելի մշակութային լինի, եւ փողոցի անվանումը, այս կամ այն մշակութային կառույցի առկայությունն այդ փողոցում չպետք է ստիպեն առաջնորդվել այլ տրամաբանությամբ: Ինձ համար սա մշակութային օջախ ստեղծելու նպատակ էր: Մի տեղ կարող է լինել մեկ այլ քանդակագործի թանգարան, մեկ այլ պատի վրա՝ այլ ստեղծագործողի գործ, որը կհամալրի այս ամբողջ մշակութային համալիրը ու կհետաքրքրացնի այս տարածքի մշակութային պատկերը»,-հավաստիացնում է Խաչատրյանը:

Մուրալի ստեղծման ընթացքը տեսնելով՝ եւ տեղացիները, եւ զբոսաշրջիկները հաճախ հետաքրքրվում են, թե ով է հեղինակը, ինչ արժեքներ է ստեղծել եւ ուղեւորվում են Երվանդ Քոչարի թանգարան, որի տնօրեն Կարինե Քոչարը շատ է կարեւորում արվեստագետներին նորարարական մեթոդներով հանրահռչակելը:

Ուշագրավ մուրալն ամբողջությամբ պատրաստ կլինի մի քանի օրից: Բացման պաշտոնական արարողությունը տեղի կունենա ապրիլի 16-ին:

● *Ապրիլի 19-ին՝ ժամը 15:00-ին, Պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Խենթը» ներկայացումը՝ ըստ Ռաֆֆու համանուն վեպի: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՊՐՈԲԱՑԻԱ

ՀԱՐՑ. Ո՞վ կարող է լինել պրոբացիայի կամավոր:
Արա Բոլեյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կամավոր կարող է լինել տասնութ տարին լրացած այն անձը, որը՝

1) տիրապետում է հայերենին,

2) ուսանում է իրավագետի, սոցիոլոգի կամ հոգեբանի մասնագիտությամբ կամ ունի պրոբացիայի ծառայության գործառույթների իրականացման համար անհրաժեշտ համապատասխան որակավորում:

ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կամավոր չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, կամ՝

2) դատապարտվել է հանցագործության համար, եւ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, կամ՝

3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված հիվանդություններից որեւէ մեկով:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ ծանոթանալ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությանը:
Նարինե Մնացականյան (34 տարեկան)

ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՊՎԾ

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությանը կարող եք ծանոթանալ կայքի «Օրենսդրություն» բաժնից՝ այցելելով «Կանոնադրություն» ենթաբաժինը:

ՀՀ ՊՎԾ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ պետական վերահսկողական ծառայության կանոնադրությունը կարող եք նաեւ ներբեռնել եւ տպել www.supervision.am կայքից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Վրաստանում լույս է տեսել հեղինակավոր հասարակական-գրական «Արիլի» ամսագրի 2024թ. առաջին համարը, որն ամբողջովին նվիրված է հայ գրականությանը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 4 + 7	+ 8 + 13
Կոտայքի լեռներ	+ 2 + 6	+ 8 + 10
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10	+12 + 16
Գեղարքունիք	+ 2 + 5	+ 6 + 10
Լոռի	+ 4 + 7	+ 9 + 11
Տավուշ	+ 7 + 10	+12 + 15
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11	+ 7 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6	+12 + 16
Արարատ	+11 + 13	+16 + 19
Արմավիր	+ 2 + 4	+ 6 + 8
Վայոց ձորի լեռներ	+ 1 + 4	+ 6 + 8
Վայոց ձորի նախալեռներ	+10 + 13	+15 + 19
Սյունիքի հովիտներ	+ 8 + 10	+13 + 15
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 6	+ 7 + 9
ԼՂՀ	+ 2 + 5	+ 7 + 9
Երեւան	+ 12 + 14	+ 17 + 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.4.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*